ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 15

«14» 03 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 91 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով, Լոռու մարզի դատախազի տեղակալի 1 թափուր հաստիքը նույն մարզի դատախազության դատախազի 1, իսկ ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի տեխնիկի 1 թափուր հաստիքը ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության տնտեսագետի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 10-ի N 54 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 91 հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 4-րդ բաժնի 28-րդ գլխի 106-րդ կետի «Մարզի դատախազի տեղակալ 3» բառերը փոխարինել «Մարզի դատախազի տեղակալ 2» բառերով, իսկ 108-րդ կետի «Դատախազության դատախազ 7» բառերը՝ «Դատախազության դատախազ 8» բառերով,

2. Հրամանի N 2 հավելվածի 1-ին բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները

1) 2-րդ գլխի 4-րդ կետի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության տնտեսագետ 7» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության տնտեսագետ 8» բառերով, նույն գլխի «**Ընդամենը 8**» բառերը՝ «**Ընդամենը 9**» բառերով,

2) 3.3-րդ գլխի 17-րդ կետի «Տեխնիկ 1» բառերը փոխարինել «Տեխնիկ 0» բառերով, նույն գլխի «**Ընդամենը 32**» բառերը՝ «**Ընդամենը 31**» բառերով, իսկ «***Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչություն 45***» բառերը՝ «***Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչություն 44***» բառերով:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա. ԴԱՎԹՅԱՆ